ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ _____ 2022 թ.

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԵՄ

ՄԿԱ՝ _____

01. 09 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐմավիրի մարզ գ.Փարաքար

«Փարաքարի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

6Ա-րդ դասարան

Առաքելյան Լիանա Ռաֆայելի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(Դասարանի ընդհանուր բնութագիրը 2022- 2023 ուս. տարում VIա դասարանում սովորում են թվով 32 աշակերտ, որոնցից 17 տղա և 15 աղջիկ: Աշակերտների բոլորը ապահովված են դասագրքերով: Դասարանում կան սոցիալապես անապահով, նպաստառու ընտանիքների երեխաներ և ԿԱՊԿՈՒ ուսումնառությամբ մեկ աշակերտ՝ Ղուկասյան Ռաֆիկ : Դասարանում կատարվում են տարբեր բնույթի կազմակերպչական աշխատանքներ՝ ապահովելով ջերմ և համերաշխ մթնոլորտ: Դասարանում նշանակվել է ավագ՝ Պետրոսյան Սյուզի: Երեխաները ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են ուսուցչի հանձնարարությունները:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Պետք է հետևել դասարանի սանիտարական վիճակին: Շաբաթական 1 ժամ անցկացնել դասղեկի ժամ: Հրավիրել ծնողական ժողովներ, ընտրել ծնողխորհուրդ՝ նախագահ և անդամներ:Ամրապնդել ծնող-աշակերտ-ուսուցիչ կապը: Կազմակերպել ուսման մեջ հետ մնացողների փոխօգնություն,իրականացնել անձի համակառողմանի և ներդաշնակ զարգացմանը ուղղված քայլեր: Մեծ ուշադրություն դարձնել առաջադիմության բարձրացմանը, անհատի և կոլեկտիվի ձևավորմանը՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: Հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը: Կազմակերպել հայրենասիրական ուղղվածության և մշակույթային արժեքներին ծանոթացնող էքսկուրսիաններ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Երեխաների մեջ պետք է սերմանել մեծ սեր հարենիքի , կրոնի և եկեղեցու նկատմամբ: Կարևորել եկեղեցու և կրոնի դերը անձի դաստիրակության և արժեքային համակարգի ձևավորման մեջ: Երեխաներին սովորեցնել, որ մշակույթային արժեքները փոխանցվում են հոգևոր դաստիրակության միջոցով: Դասարանում ունենալ Հայաստանի դրոշը և զինանշանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Էքսկուրսիաների, արշավների միջոցով երեխաների մոտ ձևավորել գեղագիտական գիտակցություն, գեղարվեստական ճաշակ և, որ շրջակա միջավայրում կարողանան տեսնել գեղեցիկը, բարին : Կարողանան գեղեցիկի ոլորտում դրսևորվել և այն ստեղծել:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմասիրական դաստիրակությունը սկսում է դպրոցից: Դպրոցում երեխայի մոտ պետք է դաստիարակել հայրենիքին անշահախնդրորեն ծառայելու ձգտումը: Ակտիվ մասնակցել դպրոցում կազմակերպված ռազմահայենասիրական միջոցառումներին, պատրաստել պատի պաստառներ՝ նվիրված հայենիքին, հայ զինվորին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակությունը առաջին հերթին ուղղված է առողջության ամրապնդման , օրգանիզմի ձևի և ֆունկցիաների ներդաշնակ զարգացմանը, ճիշտ կեցվածքի ձևավորմանը: Հետևաբար պետք է միշտ պատրաստակամ մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին, որպեսզի կարողանան ձևավորել կամային բարձր որակներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակությունը կարևոր գործունեություն է: Պետք է աշակերտի մոտ ձևավորել աշխատանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք, աշխատանքին հոգեբանորեն նախապատրաստել , քանի որ դրա միջոցով է երեխան փորձում ինքնահաստատվել, շփվել մեծահասակների հետ, ձևավորել սեփական եսը , մասնագիտական կողմնորոշում ձեռք բերել:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Պետք է գիտակցեն, որ առանց բնության կյանք չկա, սիրեն բնությունը, դառնան նրա մի մասնիկը, հոգատար վերաբերմունք դրսևորեն բնության նկատմամբ, մասնակցեն ծառատունկերին, կանաչապատման աշխատանքներին, <> ծրագրերին, հաճախակի լինեն բնության գրկում:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Հետևաբար պետք է ստեղծել ամուր կապ ուսուցիչ-աշակերտ- ծնող փոխհարաբերություններում: Ծանոթանալ աշակերտների ընտանեկան կարգավիճակին:

«ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ» ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ,ՇԱԲԱԹՎԱ ՕՐԸ, ԺԱՄԸ

Հ/2Հ	Անցկացման օր	Բովանդակություն	Ծանոթություն
1	02-09-2022թ.	«Կազմակերպել դպրոցական աշխատանքները պատշաճ ձևով, կահավորել դասասենյակը, աշակերտներին ապահովել դասագրքերով ։Ընտրել ծնողխորհրդի անդամներ և նախագահ»	
2	09-09-2022թ.	«Մեր պետական խորհրդանիշները»	
3	16-09-2022թ.	«Հայաստանի անկախությունը 30 տարեկան է»	
4	23-09-2022թ.	Զրույց , ֆիլմի դիտում << Մեր պատմության քառասունչորս օրը >> թեմայով։	
5	30-09-2022թ.	Քաղպաշտպանություն «Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները։»	
6	07-10-2022թ.	«Կազմակերպել փոքրիկ միջոցառում նվիրված«Ուսուցչի տոն»-ին »	
7	14-10-2022թ.	Քաղպաշտպանություն « Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները »	
8	21-10-2022թ.	Զրույց-քննարկում «Ես և իմ շրջակա միջավայրը» թեմայի շուրջ	
9	04-11-2022թ.	Զրույց «Ծխախոտի վնասակար ազդեղությունը» թեմայով	
10	11-11-2022թ.	Զրույց-քննարկում « Ես և իմ հայրենիքը» թեմայի շուրջ։	
11	18-11-2022թ.	Քաղպաշտպանություն « Հնարավոր բնական աղետների կանխարգելման նպատակով իրականացվող հիմնական միջոցառումները » ։	
12	25-11-2022թ.	Զրույց «Ինչպես պաշտպանվել բնական աղետների դեպքում» թեմայով	
13	02-12-2022թ.	Քաղպաշտպանություն «Տվյալ բնակավայրի , տարածքի բնական աղետների դիսկի քարտեզի կազմումը»	
14	09 -12-2022թ.	Քաղպաշտպանություն «Տվյալ բնակավայրի , տարածքի բնական աղետների դիսկի քարտեզի կազմումը»	
15	16-12-2022թ.	Զրույց« Սուրբ Ծննդյան »թեմայով։	
16	23-12-2022թ.	«Ամանորյա ներկայացումների մասնակցություն»։	
17	13-01-2023թ.	Քաղպաշտպանություն «Աշակերտների գործողությունները բնական աղետների ժամանակ» ։	
18	20-01-2023թ.	Զրույց-քննարկում, ֆիլմի դիտում «Հայոց բանակի»թեմայով	
19	27-02-2023թ.	«<<Տեառնընդառաջ>>եկեղեցական տոնի խորհուրդը»։	
20	03-02-2023թ.	Քաղպաշտպանություն «Աշակերտների գործողությունները բնական աղետների ժամանակ» ։	
21	10-02-2023թ.	Զրույց-քննարկում ‹‹ Երեխաների իրավունքները և պարտականությունները>> թեմայով ։	
22	17-02-2023թ.	Զրույց << Մտերմության , ընկերության , հոգատարության >> թեմայով։	

23	24-02-2023թ.	Քաղպաշտպանություն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի խնդիրները»:	
24	01-03-2023թ.	«Քաղպաշտպանության օր»:	
25	10-03-2023թ.	Զրույց «Ես սիրում եմ ընկերոջս» թեմայով:	
26	17-03-2023թ.	«Հայրենիքս» :	
27	24-03-2023թ.	«Կոնֆլիկտի խաղաղ կարգավորման կարևորությունը»:	
28	07-04-2023թ.	Ապրիլի 7-ին նվիրված համադպրոցական միջոցառումներ	
29	14-04-2023թ.	Զրույց , ֆիլմի դիտում << Ապրիլյան քառօրյա պատերազմի մասին>> թեմայով	
30	21-04-2023թ.	Մոմավառություն եղեռնի զոհերի հուշատախտակի մոտ	
31	28-04-2023թ.	Զրույց << Մեր երկրի ճակատագրի >> թեմայով	
32	05-05-2023թ.	Զրույց «Հայ ժողովրդի Մայիսը»:	
33	12-05-2023թ.	Զրույց << Իմ սիրած սպորտաձևը >> թեմայով	
34	19-05-2023թ.	«Ողջույն ամառ»:	